

**ԱՐՄԷՆ ՊԵ. 972-1021.**— Արսէն պարք. յանձնարարական թուղթ կուտայ 1012ին, հայազգի Սիմէոն ճգնաւորին, որ կ'ուղեւորի Եւրոպա: Այս թուղթը, շատ դարեր պահուեցաւ Սիմէոնի նշխարաց հետ: Սրբոյն կենսագիրներէն Վիոն (ԺԶ. դար) գտած է նոյն նամակը եւ թարգմանած է լատիներէնի աղուաղ եւ համառօտ ոճով. իսկականը կորսուած է: Վիոն կը պնդէ թէ թուղթը յոյն լեզուով գրուած էր և լատիներէն թարգմանուած, բայց շատեր կ'ըսեն թէ հայերէն գրուած էր: Տոնիսմոնտ ալ, Մանտուայի Եկեցղ. Պատմ. Գ. գրքին մէջ (տպ. 1612-16 հատ. Ա. էջ 159) կը յիշէ նոյն նամակը. Ալիշան Վիոնի թարգմանութիւնը հայերէնի վերածած է (Բագվալեպ Հատ. ԽԲ.), ուրկէ կը տեսնուի որ Արսէն Սրբոյ Կերեզնակի պահապան և պատրիարք Երուսաղէմի տիտղոսը կուտայ իրեն. գրոշմած է նամակը կնիքով նշանաւ Ս. Կերեզնակի Տեառն: Ի վերջոյ կը յիշէ թէ Սիմէոնը միակնն և անուպատուոր եւ ազգաւ հայ է:

**ԱՐՄԷՆ ՎՐԴ. ԳԷՈՐԳԵԱՆ, ՊՈԼՍԵՅԻ, ՄԲ.**—Ծ. 1865ին, Զո. 1889ին, ՏՊ. 1901ին. կը վտարուի միաբանութենէն:

**ԱՐՄԷՆ ՎՐԴ. ԻԼՈՎՅԻ.**—Երամիշտ. Ժամանակ մը բնակած է Ս. Յակոբի վանքին մէջ, եւ ապա դառնալով Իլով՝ կը պաշտօնավարէ և խոստովանահայր կը կարգուի տեղւոյն արքեպս.էն, Արսէն վրդ. «...հաւատացուցանէր զժողովուրդն ի ճշմարտութիւն լուսոյն, որ երեւի ի վերայ գերեզմանին Քրիստոսի... ամենեքեան առ հասարակ ի պատուի ունին զնա քանզի քաջ զիսկ վերգս եկեղեցոյ» (Բմնդ. էջ 19):

**ԱՐՄԷՆ ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, ԷՏԻՐՆԷՅԻ, ՄԲ.**—Ծ. 1882ին, Զո. 1918ին, լս. Ս. Յարութեան, կը մեկնի Սայտա, իբր հովիւ գաղթականաց:

**ԱԻԵՏԻՍ ԱԲ.**—Եղբայր Վարդան վրդ. Բաբերդցիի, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, եղբայրը փնտռելու համար, և չգտնելով զայն կը մեկնի Սիւս, ուր գացած էր Վարդան վրդ: Աւետիս իր եղբօրը հետ կ'ուղեւորի Ղրիմ, ուր կը վախճանի 1377ին (ՄԶ. թ. 189):

**ԱԻԵՏԻՔ ԲԱՂԻՇԵՅԻ.**— Քիւլիւք Ահմէտ Գարթան փաշայի հանդերձակետը, որ Տիւրքոսի և Սիդոնի կողմերը եկած էր նոյն